

ՀԱՎՈՐ ՂԱՋԱՐՅԱՆԸ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Խ. ԿԱՐԱՎԱՆՅԱՆ

Քրդական մշակույթի անխոնջ մշակ, հայ գրող, մանկավարժ Հակոբ Ղադարյանը (Լադո) ծնվել է 1869 թ. հին Բայազետում: Կրթությունը ստացել է ծննդավայրում, հետագայում տեղափոխվել է Թբիլիսի, որտեղ զբաղվել է ուսուցչությամբ և աշխատակցել է հայկական պարբերական մամուլին:

Հ. Ղադարյանի մանկական տարիներն անցել են քրդերի միջավայրում: Քրդերի հետ անմիջական շփումը, նրանց լեզվին տիրապետելը, նիստ ու կացին, սովորություններին, բանահյուսությանն ի մոտո ծանոթ լինելը, ինչպես նաև հայ-քրդական պատմամշակութային սերտ առնչությունները վճռորոշ դեր խաղացին Հ. Ղադարյանի մասնագիտական կողմնորոշման մեջ և ատաղձ հանդիսացան նրա գրական ստեղծագործությունների, եզդի քրդերի պատմության ուշագրավ մենագրության համար: Հակոբ Ղադարյանի գործերի մեծ մասը հրապարակվել է «Խաթաբալա», «Աղբյուր», «Մշակ», «Կարմիր ծիլեր» և «Մարտակոչ» պարբերականների էջերում:

Հ. Ղադարյանի տարբեր տարիների հրապարակված գրական հայտնի ստեղծագործություններից են քրդերեն, ինչպես նաև հայերեն լույս տեսած՝ «Մատանին», «Աղջկա վարձքը», «Քուրդ Ջասմի պատմությունը», «Դյուլե» (1890), «Ֆերո» (1892) պատմվածքները, «Խունխոդ» (1893) վեպը, «Յադաստ» (1904) վոդևիլը, «Թասիբ» (1899, «Բայազետցի ծածկանունով») վիպակը, որոնք արտացոլում են քուրդ ժողովրդի կյանքը, կենցաղը, հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը¹:

Ուշագրավ երևույթ էր 1926 թ. Համո Բեկ-Նազարյանի նախաձեռնությամբ նկարահանված «Ջարե» կինոնկարը, որի սցենարը գրել էր քրդերի մեջ արդեն լայն ճանաչում գտած Լադոն: Հիշյալ կինոնկարը քրդերի նիստ ու կացը, բարքերը, սովորությունները ընդհանրացնող մի նկարագիր է. այն ուշագրավ ազգագրական նյութեր է պարունակում, որոնց մեծ մասն արդեն անհետացել է կենցաղից և, որպես այդպիսին, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Լազոյի մտերմությունը քրդերի հետ, հոգեհարազատությունն ու ջերմագին վերաբերմունքը նրան նպատակամղել է քրդերի մեջ կուլտուր-լուսավորական աշխատանք ծավալելու, զբաղվելու գրական և գիտական գործունեությամբ²:

Լադոն փոխադարձ հարգանքի ու սիրո է արժանացել քրդերի կողմից. ամեն անգամ նրան տեսնելիս վերջիններս գլուխ են խոնարհել, հարազատին հատուկ մոտեցում հանդես բերել, նրան դիմել են «Ապո» (հորեղբայր) հարգալից արտահայտությամբ: Լադոն մահացավ 1926 թ. Թիֆլիսում: Նրա մահը խոր վիշտ պատճառեց քրդերին, որոնք Լազոյին համարում էին «լուսավոր աստ», պատմական դեմք, քրդական մշակույթի խոշոր գործիչ...»³: Վերջին հրաժեշտը տալով Լազոյին, քրդերը երգվում են սրբությամբ շարունակել հայ

¹ Տե՛ս Հայկական Սովետական Հանրագիտարան. հ. 4, Երևան, 1978, էջ 474: Մ. Մ. Կարավանյան. «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 4: Դ. Ստեփանյան. Կենսագրական բառարան. հ. Բ, Երևան, 1981, էջ 238: Վազիր Խան. Մեծ երախտավորի «Արևը». «Գրական թերթ», 23 հոկտեմբերի 1981:

² Քրդերի մեջ նրա լայն ճանաչում գտած լինելն է վկայում նաև այն, որ տակավին դասակարգին Մ. Տ. Շվոտը իր «Քրդերը Տաճկահայաստանում» (Ս. Պետերբուրգ, 1905) աշխատությունը ընծայագրով նվիրել է Հ. Ղադարյանին:

³ «Մարտակոչ». 6 ապրիլի 1926:

և քուրդ ժողովուրդների բարեկամության ամրապնդման վեհ գործը: Լազուլի մասին սիրո և երախտագիտության ջերմ խոսքեր են ասել քուրդ մտավորականության շատ ներկայացուցիչներ, այդ թվում՝ Ամինե Ավդալը, Կարլենե Չալանին, Կ. Քուրդուրը, Վազիրե Աշուն, Ջալիլե Ջալիլը և ուրիշներ:

Մեծ արժեք են ներկայացնում նշանակալից զրականությունը և առվեստի թանգարանում պահվող Հ. Ղազարյանի արխիվային նյութերը, որոնք հիմնականում վերաբերում են քրդերին: Լազուլի արխիվը բաղկացած է շուրջ 44 գործից, որոնք կարելի է ստորաբաժանել հետևյալ կերպ՝ գրական, ստեղծագործություններ (պիեսներ, բանաստեղծություններ, վիպակներ), բանահյուսական տարբեր բնույթի նյութեր (հեքիաթներ, առակներ, ասացվածքներ, լեգենդներ, ավանդություններ, հոգևոր երգեր), պատմության վերաբերող նյութեր (հատկապես «Նզդիների պատմությունը» ուշագրավ աշխատությունը), լեզվաբանական նյութեր (մասնավորապես քրդերեն-հայերեն մասնագիտական բառարան, ուր տեղ են գտել հատկապես կենդանիներին, թռչուններին, խոտաբույսերին, մրգերին, կենցաղային երևույթներին, մարդու մարմնի մասերին, երկրագործությանը վերաբերող տերմինները): Այս բոլորի հետ մեկտեղ արխիվում կան քրդերի վարք ու բարքին, ավանդական սովորություններին ու տոնահամբույթներին վերաբերող բազմաթիվ ու բազմազան ազգագրական նյութեր: Փորձենք համառոտակի բնութագրել Լազուլի արխիվի նյութերը:

* * *

Հայերն ու քրդերը վաղուց ի վեր ապրել են կողք-կողքի, դարերի խորքից էլ գալիս նուանց բարեկամությունը: Դրա շնորհիվ նրանք միմյանցից կրել են մշակույթի, սովորույթների, նիստ ու կացի փոխազդեցություններ: Այս հանգամանքը նրանց ավելի է մտերմացրել, դարձրել հոգեհարազատ, դրանով ներանց դարավոր պատմությունն ավելի է հարստացել: Քուրդ ժողովրդի պատմության, մշակույթի և ընդհանրապես քրդական իրականության մասին ուշագրավ տեղեկություններ են պարունակում հայկական սկզբնաղբյուրները: Առանձնապես անգնահատելի է հայ երախտավորների՝ Խ. Աբովյանի, Մ. Նդիազարովի, Գ. Սրվանձտյանցի, Ս. Հակոբյանի, Կոմիտասի, Հ. Օրբելի և այլոց ներդրումն ինչպես առհասարակ քուրդ ժողովրդի մշակույթի դարգացման, այնպես էլ մասնավորապես ազգագրական նյութերի գրառման, արժեքավորման և գիտական պատշաճ մակարդակով հասարակությանը ներկայացնելու գործում: Քրդական մշակույթի հայ երախտավորները գործնական անշահախնդիր օգնություն են ցույց տվել իրենց հարևաններին՝ նրանց մեջ ծավալելով կուլտուր-լուսավորական գործունեություն: Այս բարեկամական օգնությունն ավելի ցայտուն դրսևորվեց և գործնական բնույթ ստացավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո, լենինյան ազգային քաղաքականության կենսագործման պայմաններում:

Սովետական Հայաստանը դարձավ քրդական մշակույթի օրրան, բուռն զարգացում սկսեց ապրել նաև քրդագիտությունը, որի անխոնջ մշակներից էր Հակոբ Ղազարյանը: Տակավին Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առաջին տարիներին Սովետական Հայաստանի կառավարության հանձնարարությամբ Հ. Ղազարյանը ստեղծեց հայատառ քրդերեն այբուբեն և քրդերեն «Շամս» («Արև», Երևան, 1921) խորագրով այբբենարանը, մի երևույթ, որի դերը Հայաստանի քրդերի մշակութային կյանքում դժվար է գերազանահատել: Հայատառ քրդերենով գրականության լույս ընծայումը նպաստեց քրդա-

4 Ամինե Ավդալ. Անդրկովկասյան քրդերի կենցաղը. Երևան, 1957, էջ 141: Կարլենե Չալանին. Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամությունը (քրդերեն լեզվով). Երևան, 1977, էջ 150—151: Կ. Քուրդուր. Առաջին դպրոց.—«Ռյա թազա», № 27 (2808), 1975: Վազիրե Աշուն. Նշվ. աշխ.: Ջալիլե Ջալիլ. Վերածննդի ուղիով.—«Լենինյան ուղիով», 1982, № 12, էջ 67—68:

կան մշակույթի և դրականության առաջադիմությունը Հայաստանում և բարերար աղղեցություն ունեցավ հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում⁵։

Նյութական քուրդ գրող Վազիրեն Աշոն «Շամս» դասագրքի հրատարակման 60-ամյակի առթիվ գրել է. «Քուրդ ժողովրդի ազնիվ և նվիրյալ բարեկամների փայլուն համաստեղության մեջ իր ուրույն ու պատվավոր տեղն ունի Լադոն... Խեղճ չգտնվի սովետական քրդերի պատմությանը, լեզվին, գրականությանը, քրդական սովետական կուլտուրային նվիրված որևէ հոդված կամ մենագրություն, որտեղ սիրով և երախտագիտության զգացումով չնշվի քուրդ ժողովրդի այդ մեծ բարեկամի, քրդական կուլտուրայի անխոնջ մշակի անունը»⁶։

Ծանոթությունը Լադոնի արխիվին ցույց տվեց, որ աղտեղ կան նաև քրդերի ազգագրությանը վերաբերող շատ ուշագրավ նյութեր։ Քրդերի կենցաղային մի շարք սովորույթներ արդեն անհետացել են, ուստի դրանց վերաբերյալ նյութերը շրջանառության մեջ դնելը կարող է մեծապես նպաստել այդ ժողովրդի ազգագրության այս կամ այն հարցի լուսաբանմանն ու գիտական մեկնաբանմանը։

Լադոնի գործընկերներն ու սաները հիշում են, որ նա հաճախ էր շրջագայում Անդրկովկասի քրդական շրջաններում լեզվաբանական, բանահյուսական և աղագրական նյութեր հավաքելու նպատակով։ Այդ աշխատանքը նա սիրով շարունակում էր մինչև կյանքի վերջին տարիները։ 1924 թ. Անդրկովկասյան Կենտրոնական առնձնախմբի Գիտական ընկերությունը Ադրբեջանի քրդաբանական շրջանները, Լեռնային Ղարաբաղ և Զանգեզուր է ուղարկել գիտական արշավախումբ, որի կազմի մեջ էր նաև քրդագետ Լադոն։ Խմբաընկերները վերադառնալուց հետո Լադոն հանգես է եկել քրդերի կյանքին, լեզվին և ազգագրությանը վերաբերող ուշագրավ դասախոսություններով։ Նա քրդերին բնութագրել է որպես «ասպետ, աշխատասեր, տոկուն ու հյուրասեր» ժողովուրդ⁷։

Քանի որ քուրդ ժողովրդի ծագման ու պատմության հարցերը, ինչպես իրավացիորեն նշում է Հ. Ղաղարյանը, վարագուրված են թանձր շղարշով, նա փորձել է շարադրել մի աշխատանք, ինչ-որ չափով այդ բացը լրացնելու համար։ Խոսքը վերաբերում է «Նեղիների պատմությունը» խորագրով աշխատությունը, որը փաստորեն եզրիական ավանդությունների մի ժողովածու է⁸։

Լադոնի արխիվում մեծ թիվ են կազմում եզրիական հոգևոր երգերը (դրանք հայտնի են «Ղավըլ» անվամբ), որոնք գրի են առնվել եզրի հոգևորականներից։ Ի դեպ ասենք, որ այդ ստեղծագործությունները դարեր շարունակ անմատչելի են մնացել, հոգևորականները չեն համաձայնվել երգերը հաղորդել որևէ մեկին, դրանց իմաստին ու բովանդակությանը տեղյակ պահել ուրիշներին, քանի որ, ըստ նրանց, այդ երգերը կկորցնեն իրենց կախարդական ուժն ու գոյությունը։ Չնայած այդ դժվարություններին, անցյալ դարի 80-ական թթ. հայտնի ազգագրագետ Ս. Եղիազարովին հաջողվել է գրի առնել մի քանի հոգևոր երգ⁹։ Այնուհետև որոշ քանակով հոգևոր երգեր գրի են առնվել նաև ուրիշների

⁵ Տե՛ս X. M. Чатоев. նշվ. աշխ., էջ 282—286։ Գ. Ստեփանյան. նշվ. աշխ., էջ 238։ Օգտվել եմ Հ. Ղաղարյանի մասին Մ. Խ. Չատուկի հավաքած նյութերից, որոնք նա սիրով տրամադրեց ինձ։

⁶ Վ. Աշոն. նշվ. աշխ.։

⁷ Տե՛ս X. M. Чатоев. նշվ. աշխ., էջ 284—285։ Վազիրեն Աշոն. նշվ. աշխ.։

⁸ ՀՄՄՀ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Հակոբ Ղաղարյանի (Լադոն) արխիվ (այսուհետև՝ ԳԱԹ-ՂԱ), գործ 44։

⁹ С. А. Егизаров. Краткий этнографический очерк курдов Эриванской губернии — в кн.: Записки кавказского отдела Русского Географического общества, кн. 13, вып. 3, Тифлис, 1881, с. 150—159.

կողմից: Վերջին տարիներին արտասահմանում և Սովետական Միությունում քրդագետներին հաջողվել է բավական թվով հոգևոր երգեր գրի առնել¹⁰:

Այս հոգևոր երգերում և ավանդություններում պատումներ կան աստծու հանդես գալու, նրա կողմից աշխարհի ստեղծման, երկրի վրա հրեշտակների հայտնվելու ու նրանց հրաշագործությունների և այլնի մասին: Նույնիսկ ներկայացված է եզդիների՝ որպես միաստվածության երկրպագուների պատկերացումն այն մասին, որ աստված է ստեղծել աշխարհը, նա անմահ է, համիտենական, շունի ո՛չ սկիզբ և ո՛չ էլ վերջ, արարիչ է ու հրաշագործ: Աստծու օգնականներն են համարվում նրա բարի ու չար հրեշտակները, որոնք նույնպես անմահ ու հավիտենական են:

Աստծու արարչագործ և բարի հրեշտակներից է եզդիների մեջ սրբացված Մալաքե Տաուզը (Սիրամարգ թռչուն): Ըստ ավանդության, Մալաքե Տաուզին աստված է ստեղծել և ուղարկել եզդիների մեջ՝ նրանց տիրություն անելու: Այն ներկայացված է սիրամարգ թռչունի պատկերով, պատրաստված ձուլածո պղնձից: Կազմն առաջիններից մեկն է եղել, որ պնդել է, թե Մալաքե Տաուզ նշանակում է հրեշտակ, որը աստծու ներկայացուցիչն է, աստվածային հոգու մասնիկը¹¹: Մալաքե Տաուզի պաշտամունքը եզդիների մեջ այնքան դրոշմ է եղել, որ նրան նույնիսկ նույնացրել են գերագույն աստծու հետ, գրում է Լապուն¹²: Ըստ եզդիական հոգևոր երգերի, Ադամին ու Եվային ստեղծողը Մալաքե Տաուզն է, որը աստծու հրամանով աշխարհի շորս կողմերից բերել է հոռ, չուր, քամի ու կրակ և դրանց շաղախից ստեղծել ու շունչ է տվել նախամարդուն՝ Ադամին, ապա նաև Եվային, որոնցով էլ սկիզբ է դրվել մարդկությանը: Մի այլ հոգևոր երգ-ավանդությունում ասվում է, որ Ադամից ու Եվայից ծնվում են 72 աղգ, որոնցից մեկն էլ եզդիներն են, եզդի ժողովուրդը¹³: Նույն Մալաքե Տաուզն է, որ մարդկությանը փրկել է ջրհեղեղից¹⁴:

Հոգևոր երգերից մեկում հավաստվում է, որ Ադամի ու Եվայի ժառանգները հավիտենական չեն, գոյություն ունի ծնունդ և մահ, խոսք է գնում այն մասին, որ երկնքում ոչինչ չկա, ինչ որ կա՝ մարդկություն, կենդանական և բուսական աշխարհ, երկրի վրա է. ավելին, երկիրն անընդհատ փոխվում ու զարգանում է¹⁵: Եզդի քրդերի պատկերացմամբ, աստծու հրամանով, նախամարդու ստեղծվելուց հետո Մալաքե Տաուզը մտահոգվում է նրանց կերակրելու հարցով՝ սկսում է վարել, ցանել հատիկներ, որոնք մարդ արարածի գոյության նախապայմանն են, նրան կյանք տվողը: Հենց Մալաքե Տաուզն է Ադամին սովորեցնում վար ու ցանք անելը¹⁶: Հավանաբար Մալաքե Տաուզի կողմից Ադամին ու Եվային արգելված պտուղ տալու և նրանց հողագործությամբ զբաղվելու հանգամանքն է նկատի ունեցել Հ. Ղադարյանը, երբ Մալաքե Տաուզին համարել է երկրագործության աստված¹⁷: Ի դեպ, այս տեսակետին է նաև սովետական բուրգ աղգադրագետ Ամինե Ավդալը¹⁸: Հ. Ղադարյանի արխիվում ուշագրավ նյութեր կան այն մասին, թե ինչպես Կալեշի (Իրաքյան Քրդստան) եզդիական հոգևոր տաճար-կենտրոնի ծառաները՝ դավանները, ամեն տարի վերց-

10 Курдский фольклор, собрали и составили Ордихане Джалил и Джалиле Джалил. Кн. II, М., 1978 (на курдском языке); Քրդական բանահյուսություն, գրառում, կաղմել, առաջարան ու ծանոթագրություններ՝ Օրդիխանե Զալիլի ու Զալիլե Զալիլի. գիրք 1, Երևան, 1978, գիրք 2, Երևան, 1982 (քրդերեն լեզվով): М. Б. Руденко. Курдская обрядовая поэзия. М., 1982.

11 ԳԱԹ-ՂԱ, գ. 44, էջ 19—25:

12 Նույն տեղում, գ. 16, էջ 3—7, գ. 44, էջ 19—20:

13 Նույն տեղում, գ. 44, էջ 10—13:

14 Նույն տեղում, էջ 73—78, գ. 16, էջ 7—9:

15 Նույն տեղում, գ. 16, էջ 3—8, գ. 44, էջ 89:

16 Նույն տեղում, գ. 16, էջ 3, 12, 15:

17 Նույն տեղում, էջ 3, 14, գ. 44, էջ 95—97:

18 Ամինե Ավդալ. Անդրկովկասյան քրդերի կենցաղը, էջ 60:

նում են Մալաթե Տաուդի թղչնակերպ ձուլածո պղնձե արձանիկը որպես սուրբ մասունք և շրջում են եզդիների մեջ ու նրա պատվին նվիրատվություններ հավաքում¹⁹։

Գրեթե բոլոր ժողովուրդների պատկերացումներում էլ եղել են շար հրեշտակներ՝ հոգիներ, եղդիների պաշտամունքային դիցարանում ևս կան այդպիսիք, որոնք սովորաբար հանդես են գալիս ֆինեք, դեք և այլ հորջորջումներով։ Եզդիներն ընդունում են շար ոգու գաղափարը, որը շրջում է աշխարհով մեկ և մոլորեցնում մարդկանց²⁰։ Այն կարծիքը, թե իբր եզդի քրդերի մեջ գոյություն է ունեցել շար ոգու պաշտամունք, խիստ քննադատության է ենթարկվել²¹։ Ղազարյանի կողմից՝ նա գտնում է, որ այդ տեսակետը դուրկ է որևէ հիմնավորումից։ Այդ առթիվ Հ. Ղազարյանը վկայակոչում է եզդիական ավանդություններում եղած հիշատակությունն այն մասին, որ սատանան, չարագործություններ կատարելուց հետո, աստծու կողմից հեռացվել է երկնքից և եզդիները խղճալով տիրություն են արել նրան։ Ասացողները հավաստիացնում են, որ սատանային չպետք է հաջոցել, վիրավորել, շատ դեպքերում՝ նաև անունը տալ, որպեսզի դարձյալ չարկամ գործեր չձեռնարկի։ Այսպիսով, ըստ եզդիների հավատալիքի, սատանան ոչ այլ ինչ է, եթե ոչ շար հրեշտակ, սակայն ներքին խղճալը, դժալը դեռ չի նշանակում, որ նրան երկրպագել են։

Ըստ Հ. Ղազարյանի, եզդիական ուսմունքն ամփոփված է «Քիթաբե Ռաշ» գրքում²²։ Այդ գիրք-ուսմունքի հեղինակը եզդիական իրականությունում լայնորեն հայտնի Շեխադին է։ Հոգևոր երգերից մեկում պատմվում է, թե Շեխադին ինչպես էր տարածում իր ուսմունքը ժողովրդի մեջ, նրա առաքելությունը հայտնի է եղել պարսիկներին, արաբներին, ասորիներին²³։ Այլ հոգևոր երգերից իմանում ենք, թե եզդիների հոգևոր պետը ինչ ջանասիրությամբ է գրքեր կարդում, սովորեցնում իր աշակերտներին։ Նրա պատվին տաճար է կառուցվել իրաքյան Քրդաստանի Լալեշ գյուղում²⁴։

Լադոն հայտնում է այն միտքը, թե եզդիական կրոնի հիմքում ընկած է դրադաշտականությունը, հետագայում այն որոշակի աղդեցություն է կրել քրիստոնեությունից, ինչ-որ չափով նաև մահմեդականությունից²⁵։ Նա համաձայն չէ այն կարծիքին, թե քանի որ եզդիները արևորդիք են, ուրեմն նրանք քրդեր չեն։ Եզդիները քուրդ ժողովրդի մի հատվածն են, միայն այլ դավանանքի, — ասում է նա²⁶։

Հ. Ղազարյանի առիսիվային ֆոնդերում ղգալի տեղ են գրավում նաև եզդիների ապրելակերպին և դրանց հետ առնչվող արարողություններին, մասնավորապես հասարակական կենցաղին վերաբերող նյութերն ու տեղեկությունները։ Հ. Ղազարյանը աղգագրական հետաքրքիր նյութեր է հավաքել քրդական իրականությունում հարատևող նահապետական գերդաստանի մասին։ Գերդաստանը ղեկավարում էր նրա նահապետը՝ տարեց, հեղինակություն ունեցող տղամարդ։ Նա համարվել է գերդաստանի տերն ու տնօրենը, հարաբերությունները կարգավորել է սովորութեական իրավունքի դարեր ի վեր մշակված չափանիշներով։ Ուշագրավ են մասնավորապես ըստ սեռերի և տարիքի աշխատանքի բաժանման սկզբունքի կիրառման մասին նյութերը²⁷։

Արիսիվային ֆոնդերում կան նյութեր նաև հյուրասիրության կանոնների և վարվեցողության հնագույն ձևերի մասին։ Այսպես, ընտանիքի անդամների

19 ԳԱԹ-ՂԱ, գ. 44, էջ 100—115։

20 Նույն տեղում, էջ 90—95։

21 Նույն տեղում, գ. 16, էջ 3, գ. 44, էջ 3—150։

22 Նույն տեղում, գ. 18, էջ 5—25։

23 Նույն տեղում, էջ 3—10։

24 Նույն տեղում, գ. 44, էջ 83։ Այս տեսակետը լրջորեն խորհելու տեղիք է տալիս, սակայն դրան անդադարձալը թողնենք այլ առիթի, քանի որ այն չի մտնում սույն հոդվածի շրջանակներին մեջ։

25 Նույն տեղում, գ. 16, էջ 3, գ. 44, էջ 19, 21—26։

26 ԳԱԹ-ՂԱ, գ. 1, էջ 12—28։

ճաշելու պահին տուն մտած քուրդ հյուրը սովորաբար բարև չի տալիս: Այս երևույթը բացատրվում է այն բանով, որ եթե սեղանն արդեն գցված է, ուրեմն հրեշտակները բարի ողջույն են մաղթել: Այսպես է մեկնաբանում Հ. Ղազարյանը²⁷: Հիշյալ երևույթի երբեմնի գոյությունը քրդական իրականությունում առավել հասկանալի դարձնելու համար հարկ է նշել, որ ըստ երևույթին, սեղանը և ընդհանրապես ամեն մի ճաշկերույթ մի յուրօրինակ զոհաբերություն էր հրեշտակների՝ բոլոր սեղանը հովանավորողների պատվին: Տվյալ դեպքում սեղանի առկայությունն ինքնին նշանակում է, որ սեղանակիցները (տան անդամները ևս) կատարել են բարի գործ, չէ որ բարև տալը բարեմաղթանքի սիմվոլիկ արտահայտություն մի ձև է: Ըստ էության, այդ բարի գործի դրսևվորման լավագույն արտահայտությունն էր ճաշկերույթի ժամանակ հյուրերի ներկա գտնվելը, որն ինքնին արդեն բարև տալու խորհրդանշ էր:

Հյուրընկալության սովորույթն առհասարակ հատուկ տեղ է գրավել քրդերի հասարակական կյանքում ու կենցաղում: Հյուրն արժանացել է մեծ պատվի ու հարգանքի, որով բարձրացվել է ընտանիքի և նախնիների օջախի պատիվը: Այս ընկալումով էլ ընտանիքի ամեն մի անդամ, ընդ որում նաև կինը՝ նույնիսկ ամուսնու բացակայության դեպքում, դարերից եկող պապենական այդ սովորույթը պահպանում էր սրբույթյամբ²⁸:

Հ. Ղազարյանի ուշադրությունից չի վրիպել քրդերի մեջ լայնորեն հայտնի ժամանցի ձևը՝ բնդարուկի (հավաքավայր) ավանդական սովորույթը, որի վերաբերյալ նույնպես ուշագրավ նյութեր կան նրա արխիվում: Դա երիտասարդ աղջիկների ու տղաների համատեղ տոնախմբության մի ձև է եղել. սովորաբար հավաքվել են բնության գրկում՝ որևէ ծառի տակ («բնդարուկ») բառացի նշանակում է հենց ծառի տակ կամ շուրջը հավաքվել) կամ կիրճերում, մարգագետիններում, աղբյուրների մոտ, առվակների ափին և երգ ու խաղով անցկացրել ժամանակը:

Ահա թե լազոն ինչպես է նկարագրում այդ սովորույթը: Բոլոր ջահել աղջիկները խմբվում և դնում էին մոտիկ բլրի վրա Բնդարուկի, այնտեղ նրանք բուրդ մանելով երգում, պարում և զվարճանում էին: Այստեղ ազգակցական խմբի ջահել տղաները պետք է ջրիդ խաղային: Ամեն մի երիտասարդ պետք է աշխատեր իր շնորհքը ցույց տալ: Բնդարուկի գնացող աղջիկները ամուսնացուներ էին ընտրում և ընտրելուց հետո ստուգում էին նրանց արժանիքները: Ամեն երիտասարդ վաղուց էր պատրաստվել այդ օրվան և աշխատում էր որքան կարելի է լավ զրահավորված և լավ «ռախտ ու ուշմով» հանդես գալ, որպեսզի գրավեր աղջիկների ուշադրությունը և ժողովրդի համակրանքը: Բնդարուկի օրը մասնակիցները նոր հագուստ էին հագնում, տղաները դեղեցիկ դարդարում էին իրենց սիրելի ձիերին:

Բնդարուկի սովորույթը վկայում է, որ շնայած քրդերի նահապետական կյանքի սահմանափակվածությանը և սոցիալական անհավասարությանը, երիտասարդ աղջիկներն ու տղաներն ունեցել են միմյանց հանդիպելու, սիրողագրում ապրելու, ամուսնական ընտրություն կատարելու որոշ հնարավորություններ: Այս առումով տեղին է նշել նույն արխիվից «Սիրահարների ժառանգություն» աղջկա և տղայի հանդիպելու ավանդույթը: Այդտեղ նրանք սիրուն հավատարիմ մնալու եղղում են տվել և որպես դրա առհավատչյալ՝ փոխանակել որևէ իր:

Արխիվում նյութեր կան ամուսնության ձևերի, այդ թվում օրորոցախաղի, առևանգման, հարսանեկան արարողությունների, գլխագնի (ղալան), պարեղանակների, ամուսնական առագաստի, հղիության, չբերության և դրա բուժման ժողովրդական միջոցների, ծննդաբերության, երեխաների դաստիարակության, տղաների թլպատման, ամուսինների բաժանման պատճառների և

²⁷ Նույն տեղում, գ. 18, էջ 15—18:

²⁸ Նույն տեղում, գ. 1, էջ 4—7, գ. 13, էջ 5—15:

նրանց հասնող դույքի ու անասունների ժառանգման կարգի, թաղման ծեսերի և այլնի մասին²⁹, Հետաքրքիր է, որ ըստ քրդերի մեջ արմատացած սովորույթի, նշանդրերի ժամանակ տղա ժառանգ շունեցող հարսնացուի հայրը պայման էր կապում փեսացուի հոր հետ, որ իր աղջկանից արու զավակ ծնվելու դեպքում նա անսլայման վերադարձնի իրեն որպես ժառանգ³⁰:

Տեղեկություններ կան առհասարակ շար աչքից հեռու պահելու, մասնավորապես թիմորը արևի մայր մտնելուց հետո հարևանին ցույց չտալու, առաջին թիված հացն անմիջապես չուտելու, դուրս չհանելու, այրված հացը (нане кут) երբեք աղբատին չտալու և նման այլ երևույթների մասին: Հ. Ղազարյանի ֆոնդում գտալի տեղ են բռնում նյութական մշակույթին (կահկարասի, ուտեստ, հագուստ), ինչպես նաև անասնապահական մթերքների մշակմանը վերաբերող նյութերը:

Արխիվի նյութերը շատ բազմազան են և մի հոդվածի սահմաններում հրաճարավոր չէ բոլորին շատ թե թի: Հանգամանորեն անդրադառնալ: Մենք է հուսալ, որ քրդերի մշակույթին անմնացորդ նվիրված Հ. Ղազարյանի (կազո) հարուստ ժառանգությունը (մասամբ տպագրված պարբերական մամուլում, մեծ մասամբ անտիպ), որն այսօր էլ չի կորցրել իր դիտական կարևորությունը, ի մի կրերվի և դրա ընտրանին կհրատարակվի ամբողջական ձևով: Դրանով արժանին կհատուցվի բուրդ ժողովրդի անձնվեր բարեկամի հիշատակին:

АКОП КАЗАРЯН И ЭТНОГРАФИЯ КУРДОВ

М. Х. ДАРВЕШЯН

Резюме

В дело научного освещения вопросов истории и культуры курдского народа ощутимый вклад внесли армянские исследователи. Один из них—Акоп Казарян (Лазо). Заслуги А. Казаряна в курдоведении, кроме научного и познавательного значения, свидетельствуют также о традиционной дружбе между армянским и курдским народами. Однако по сей день нет ни одной научной публикации, освещающей его деятельность как этнографа. Этот пробел частично восполняется настоящей статьей, написанной в основном на архивных, а также опубликованных материалах. Обобщая и вводя в научный оборот эти материалы, мы уделяем особое внимание оценке этнографического наследия А. Казаряна. Материалы, касающиеся этнографии курдов, важны и в том отношении, что дают возможность реконструировать характер и сущность многих явлений, давно вышедших из быта, и представить их для научного анализа.

²⁹ Նույն տեղում, գ. 3, էջ 32—33:

³⁰ Նույն տեղում, գ. 1, էջ 12—13: